ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 04.02.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2022/14

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ վարչապետի աշխատակազմ
Մասնակից՝ «Մեդիսար» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Մեդիսար» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Մարգարյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՎԱԲՏ-ԳՀԱՊՁԲ-21/19» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ, Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կարիքների համար չափման և հսկողության սարքերի ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ՎԱԲՏ-ԳՀԱՊՁԲ-21/19-1»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 10.01.2022թ.-ի թիվ 26/26-1/305-2022 գրությամբ «Մեդիսար»

ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ վարչապետի աշխատակազմի 30.12.2021թ. թիվ 02/17.4/45278-2021 գրության հիման վրա, 10.01.2022թ.-ին «Մեդիսար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 10.01.2022թ.-ին:

07.01.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-LO-2022/14 համարի ծածկագիրը:

14.01.2022թ.-ին, 26.01.2022թ.-ին և 04.02.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 26.01.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 04.02.2022թ.-ին:

2. ՀՀ վարչապետի աշխատակազմի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ վարչապետի աշխատակազմը 30.12.2021թ. թիվ 02/17.4/45278-2021 գրությամբ, դիմելով ՀՀ ֆինանսների նախարարությանը, հայտնել է հետևյալը.

««Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ տեսչական մարմնի գործունեության ապահովման համար անհրաժեշտ հաշվապահական հաշվառման, գնումների կազմակերպման (ֆինանսաբյուջետային), անձնակազմի կառավարման և կազմակերպատնտեսական, տեսչական մարմնի բյուջեի, (...) վարչական

(կազմակերպչական) բնույթի գործառույթներն իրականացնում է Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմը:

Վերը նշված կարգավորման ուժով՝ տեսչական մարմնի կարիքների համար իրականացվող գնման գործընթացների պատվիրատուն հանդիսանում է վարչապետի աշխատակազմը:

ՀՀ կառավարությանը ենթակա բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի (այսուհետ՝ տեսչական մարմին) կարիքների համար վարչապետի աշխատակազմը կազմակերպել էր «ՎԱԲՏ-ԳՀԱՊՁԲ-21/19-1» ծածկագրով ապրանքների գնման ընթացակարգ, որի շրջանակներում 2021 թվականի նոյեմբերի 16-ին վարչապետի աշխատակազմի և «Մեդիսար» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև կնքել է N ՎԱԲՏ-ԳՀԱՊՁԲ-21/19-1 ապրանքների ձեռքբերման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), որի 8.13 կետի համաձայն՝ Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո Պայմանագրով սահմանված Գնորդի իրավունքներն ու պարտականությունները փոխանցվում են բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնին:

Տեղեկացնում եմ, որ Ընկերության կողմից մինչև պայմանագրով նախատեսված վերջնաժամկետը (25.12.2021թ.) ապրանքների մատակարարումները ողջ ծավալով չեն իրականացվել՝ վերջինիս այն պատճառաբանությամբ, որ ապրանքը գտնվում է ռուս-վրացական սահմանին գտնվող Լարսի մաքսակետում, իսկ Լարսի հատվածում գտնվող ավտոճանապարհները ներկայումս փակ են բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների համար: Վերոգրյալով պայմանավորված՝ մատակարարը խնդրել է Պայմանագիրը երկրորդ չափաբաժնի մասով համարել լուծված:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ վարչապետի աշխատակազմը՝ ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվում է 16.11.2021թ. Ընկերության հետ կնքված ՆՎԱԲՏ-ԳՀԱՊՁԲ-21/19-1 ծածկագրով ապրանքների ձեռքբերման պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն մասնակիորեն լուծված:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության, ինչպես նաև ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին» N 526-Ն որոշման N1 հավելվածով հաստատված կարգի 45-րդ կետի պահանջները՝ կից ներկայացնում ենք հիմնավորող փաստաթղթերը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «Մեդիսար» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Մեդիսար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 12.01.2022թ.-ին գրությամբ դիմել է «Մեդիսար» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 10.01.2022թ.-ի թիվ 26/26-1/305-2022 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Մասնակիցը 18.01.2022թ.-ին ներկայացրած գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ ֆինանսների նախարարությունը դիմելով Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լևոն Օհանյանին (այսուհետ Բողոքներ քննող անձ), խնդրել է Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ընթացքը, որը կայանում է «Մեդիսար» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Մասնակից կամ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընթացակարգի նախաձեռնությամբ: Մասնակիցը համարում է նախաձեռնած ընթացակարգը ոչ իրավաչափ, ակնհայտ անհիմն և ղեկավարվելով <Գնումների մասին> ՀՀ օրենքի (այսուհետև նաև Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջնի, ներկայացնում ենք սույն դիրքորոշումը.

Մեդիսար ՍՊԸ-ի փաստերը.

1. Վարչապետի աշխատակազմի և «Մեդիսար» ՍՊԸ-ի միջև 16.11.2021թ.կնքվել է N ՎԱԲՏ- ԳՀԱՊՁԲ-21/19-1 ծածկագրով գնման պայմանագրի թիվ 1 Համաձայնագիր;

2. Համաձայնագրի թիվ 1 Հավելվածի համաձայն գնման առարկա հանդիսացող չափման և հսկողության սարքերի մատակարարման ժամկետ էր սահմանված Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 39-րդ օր, բայց ոչ ուշ քան 25.12.2020թ.:

3. «Մեդիսար» ՍՊԸ-ի կողմից անմիջապես պայմանագիրը ստորագրելուց հետո իր մատակարարին ներկայացվել է պատվերը, որի մասին է վկայում մատակարարի կողմից նոյեմբերի 22-ին ներկայացված Order confirmation:

4. «Մեդիսար» ՍՊԸ-ի և Վարչապետի աշխատակազմի միջև կնքված պայմանագրի կնքելու պահին առկա չեն եղել որևէ հանգամանքներ, որոնք վկայելու էին Պայմանագրով սահմանված գնման առարկաների պայմանագրով սահմանված ժամկետում չմատակարարելու հանգամանքների առկայության կամ մատակարարման ուշացման մասին:

5. Ընկերության կողմից գրություններ են ուղարկվել ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնին այն մասին, որ մատակարարման ժամկետները Լարսում առկա և հանրահայտ իրավիճակի պատճառով ուշացվում են և խնդրել ենք երկարաձգել մատակարարման ժամկետները, որի առնչությամբ էլ կնքվել է 08.12.2021թ.-ին համաձայնագիրը:

6. 27.12.2021թ.-ին Ընկերության կողմից մատակարարվել է 1-ին չափաբաժինը, քանզի այդ ապրանքը պատվիրվել էր ՌԴ-ից, այն դեպքում, երբ 2-րդ չափաբաժնի մատակարարումը տվյալ պարագայում Գերմանիայից էր:

7. 2-րդ չափաբաժնի մատակարարման ուշացման և մատակարարման ժամկետի երկարաձգման անհնարինության պարագայում, Ընկերությունը հարկադրված իր գրությունում խնդրել էր Պայմանագիրը համարել լուծված Պայմանագրի 7-րդ կետի համաձայն:

8. Պատվիրատուն պայմանագրի միակողմանի լուծման հիմք է համարել պայմանագրի 2.1.7 կետը, որի համաձայն Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե վաճառողը էականորեն խախտել է պայմանագիրը: Վաճառողի խախտումն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավել: Տվյալ դեպքում մատակարարման վերջնաժամկետը դեկտեմբերի 25-ն էր, իսկ Պայմանագրի միակողմանի լուծման ծանուցումը հրապարակվել է տեղեկագրում սույն թվականի հունվարի 3-ին: Վկայակոչված փաստերից ակնհայտ է, որ Պայմանագրով սահմանված 2.1.7 կետով սահմանված հիմքը վրա չէր հասել:

9. Ընկերությունը պայմանագրի լուծման վերաբերյալ ծանուցումը ստացել է Հայփոստի միջոցով միմիայն սույն թվականի հունվարի 18-ին:

10. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված գրությամբ ամրագրված է, որ իրենց ներկայացված 30.12.2021թ.-ի գրությամբ դիմել է ՀՀ վարչապետի աշխատակազմը, այն դեպքում, երբ պայմանագրի լուծման վերաբերյալ ծանուցումը հրապարակվել է սույն թվականի հունվարի 3-ին, որից հետո նոր պետք է համապատասխան գործընթացին ընթացք տրվեր:

11. Նախաձեռնած գործընթացը Գնումների մասին օրենսդրության իմպերատիվ նորմերի խախտմամբ է նախաձեռնված և ենթակա է մերժման, քանզի իրավաչափ չէ:

12. «Մեդիսար» ՍՊԸ-ի կողմից ձեռնարկվել են բոլոր հնարավոր միջոցները, որպեսզի ապահովի կնքված պայմանագրով ստանձնված պարտավորության կատարումը սահմանված ժամկետներում:

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված գրությամբ «Մեդիսար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգ ակնհայտ անհիմն է և ենթակա է մերժման հետևյալ հանգամանքներից ելնելով.

Գնումների մասին ՀՀ օրենքի (այսուհետև Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող անձի [հետ]՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետև Օրենսգիրք) 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե

ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Տվյալ պարագայում խախտման հիմքերը կարելի է բաժանել երկու խմբի օբյեկտիվ և սուբյեկտիվ:

Օբյեկտիվ հիմքը ֆորսմաժորային հանգամանքները, իսկ սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ օրենսդիրը որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել էպարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Ավելին, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարածկամ անպատշաճ կատարած անձը ենթակա չէ պատասխանատվության միայն այն դեպքում, եթե ապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով (թիվ ԵԷԴ/0888/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015թվականի որոշում):

Մեդիսար ՍՊԸ-ն կնքված Պայմանագրի համաձայն պատվեր է ներկայացրել մատակարարող ընկերությանը դեռևս 22.11.2020թ.-ին: Սակայն հաշվի առնելով հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, եղանակային անբարենպաստ պայմանները գնումների առարկաներից 2-րդ չափաբաժնի մատակարարումը սահմանված ժամկետում չի կատարվել: Պատվիրատուին ներկայացվել է համապատասխան գրություն Մեդիսար ՍՊԸ-ի կողմից ֆորս մաժորային հանգամանքներով պայմանավորված լինելու փաստով 2-րդ չափաբաժնի մասով պայմանագիրը լուծված համարելու վերաբերյալ:

Սակայն Պատվիրատուն անտեսել է այդ հանգամանքը, որը բոլորիս համար ակնհայտ էր, քանզի բոլոր լրատվամիջոցներով այդ մասին խոսվել և արձանագրվել է:

Ավելին, Պատվիրատուի կողմից ձեռնարկված գործընթացը ակնհայտ անհիմն է, քանզի վերջինս ձեռնարկել է Ընկերությանը սև ցուցակ գցելու գործընթացը, որից հետո նոր հրապարակել է 03.01.2022թ.- ին պայմանագրի միակողմանի լուծման վերաբերյալ ծանուցումը: Ավելին, պայմանագրի միակողմանի լուծման հիմքը, այն է 2.1.7 կետով սահմանված էական խախտումը առկա չէ:

Տվյալ պարագայում, «Մեդիսար» ՍՊԸ սահմանված ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցները այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով պայմանագրով սահմանված ժամկետում չի կարողացել մատակարարել 2-րդ չափաբաժինը: Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է արձանագրվել ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014թ.-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով որոշմամբ:

Այսպիսով ստացվում է, որ Մեդիսար ՍՊԸ-ի կողմից 2-րդ չափաբաժինը սահմանված ժամկետում չմատակարարելը պայմանավորված է եղել արտակարգ և անկանխելի, այսինքն այնպիսի բացառիկ, անսովոր, եզակի հանգամանքների ի հայտ գալով, որոնք հաղթահարելը տվյալ պարագայում օբյեկտիվորեն անհնարին է:

Այսպիսով, վերոնշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերից ակնհայտ է, որ Մեդիսար ՍՊԸ-ի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունների խախտումն եղել է օբյեկտիվ հիմքերից պայմանավորված Լարսի ճանապարների փակ լինելու, որի արդյունքում առաջացած պատճառներն անհնարին են դարձրել Մեդիսար ՍՊԸ-ի ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարումը վերջինիս անկախ հանգամանքներով:

Ամփոփելով վերոգրյալը, գտնում ենք, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել Մեդիսար ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցողմասնակիցների ցուցակում ներառելու:»:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է մերժել «Մեդիսար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նախաձեռնված ընթացակարգը:

4. <u>ՍՑ-LO-2022/14 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ վարչապետի աշխատակազմի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Մեդիսար» ՍՊԸ-ի միջև 16.11.2021թ.-ին կնքվել է թիվ «ՎԱԲՏ-ԳՀԱՊՁԲ-21/19-1» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կարիքների համար սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված չափման և հսկողության սարքերը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

iii. Պայմանագրի հավելված 1-ով սահմանվել է, որ ապրանքների մատակարարումը պետք է իրականացվի Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 21-րդ օր:

iv. ՀՀ վարչապետի աշխատակազմի և «Մեդիսար» ՍՊԸ-ի միջև 08.12.2021թ.-ին կնքվել է թիվ «ՎԱԲՏ-ԳՀԱՊՁԲ-21/19-1» ծածկագրով կնքված պետական գնման պայմանագրի թիվ 1 համաձայնագիրը (այսուհետ նաև՝ Համաձայնագիր):

v. Համաձայնագրի 1.1 կետի համաձայն՝ կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման ժամկետը երկարաձգել 18 (տասնութ) օրացուցային օրով և հաստատել Տեխնիկական բնութագիր-Գնման ժամանակացույցը համաձայն հավելված 1-ի:

vi. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժնում, 03.01.2022թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին 03.01.2022թ.-ի թիվ 02/17.4/45253-2021 ծանուցման համաձայն՝ ՀՀ կառավարությանը ենթակա բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի (այսուհետ՝ տեսչական մարմին) կարիքների համար չափման և հսկողության սարքերի ձեռքբերման նպատակով՝ 16.11.2021թ. վարչապետի աշխատակազմի և «Մեդիսար» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն)

միջև կնքել է թիվ ՎԱԲՏ-ԳՀԱՊՁԲ-21/19-1 ծածկագրով ապրանքների ձեռքբերման պայմանագիր:

Պայմանագրի 1-ին կետի համաձայն՝ Վաճառողը (տվյալ դեպքում՝ «Մեդիսար» ՍՊԸ-ն) պարտավորվում է բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կարիքների համար նույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված չափման և հսկողության սարքեր, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Վաճառողի կողմից խախտումն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ վարչապետի աշխատակազմը՝ ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվում է 16.11.2021թ. Ընկերության հետ կնքված թիվ ՎԱԲՏ-ԳՀԱՊՁԲ-21/19-1 ծածկագրով ապրանքների ձեռքբերման պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն մասնակիորեն լուծված:

Միաժամանակ, տեղեկացնում եմ, որ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու հիմքով պայմանագիրը մասնակիորեն լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին» N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն հրապարակել է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 10.01.2022թ.-ի թիվ 26/26-1/305-2022 գրությամբ «Մեդիսար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար **պատասխանատու է մեղքի առկայության դեպքում**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կարիքների համար սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված չափման և

հսկողության սարքերը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելվել նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես

նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը(ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում *(տե՛ս, «Հայբիզնեսբանկ» ՍՊԸ-ն ընդդեմ «Միլլար» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը)*:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ ՀՀ վարչապետի աշխատակազմի և «Մեդիսար» ՍՊԸ-ի միջև 16.11.2021թ.-ին կնքված թիվ «ՎԱԲՏ-ԳՀԱՊՁԲ-21/19-1» ծածկագրով պետական գնման պայմանագրի հավելված 1-ով սահմանվել է, որ ծառայությունների մատուցումը պետք է իրականացվի Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 21 օրյա ժամկետում: Հետագայում՝ 08.12.2021թ.-ին կողմերի մինչև կնքվել է Համաձայնագիր, որով կողմերը փոխադարձ համաձայնությամբ Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման ժամկետը երկարաձգել են 18 (տասնութ) օրացուցային օրով:

Պատվիրատուն, հաշվի առնելով, որ Մասնակիցը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները, հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետը, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածը և 466-րդ հոդվածի 3-րդ մասը, որոշել է միակողմանիորեն լուծել 16.11.2021թ.-ին կնքված թիվ «ՎԱԲՏ-ԳՀԱՊՁԲ-21/19-1» ծածկագրով պետության կարիքների համար Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կարիքների համար չափման և հսկողության սարքերի մատուցման պետական

գնման պայմանագիրը՝ www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժնում, 03.01.2022թ.-ին հրապարակելով պայմանագրի միակողմանի լուծման մասին 03.01.2022թ.-ի թիվ 02/17.4/45253-2021 ծանուցումը:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուի կողմից խախտվել է Պայմանագրի 2.1.7 կետի 2.1.7.1 ենթակետի «բ» պարբերությամբ սահմանված դրույթները, մասնավորապես՝ Պայմանագրի վկայակոչված կետով սահմանվել է, որ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի, իսկ 08.12.2021թ.-ին կնքված Համաձայնագրի 1.1 կետով կողմերի փոխադարձ համաձայնությամբ Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման ժամկետը երկարաձգվել է 18 (տասնութ) օրացուցային օրով, որը լրանում է դեկտեմբերի 26-ին (8+18=26): Նշված ժամկետների հաաշվառմամբ՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ Պայմանագիրը՝ ժամկետների էական խախտման հիմքով, Պատվիրատուն կարող էր միակողմանիորեն լուծել միայն Պայմանագրով սահմանված 15 օրը լրանալուց հետո՝ 10.01.2022թ.:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց

հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Նշված իրավանորմի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուն 03.01.2022թ.-ի թիվ 02/17.4/45253-2021 ծանուցմամբ չէր կարող միակողմանիորեն լուծել պայմանագիրը՝ Պայմանագրի 2.1.7 կետի 2.1.7.1 ենթակետի «բ» պարբերությամբ սահմանված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման 15 օրից ավելի լինելու հանգամանքով պայմանավորված:

Ուստի, նման պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել

ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 10.01.2022թ.-ի թիվ 26/26-1/305-2022 գրությամբ «Մեդիսար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2022/14 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**